ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1956 Общественные науки

Վ. Ավետիսյան

ՀԱՅ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

19-րդ դարի վերջին Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման և բանվոր դասակարգի կազմավորման հետևանքով հող նախապատրաստվեց մարքսիզմի տարածման և սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ստեղծման համար։ Մի կողմից կալվածատիրական և ուժեղացող կապիտալիստական շահագործումը, մյուս կողմից ցարական ինքնակալության ճնշումներն ու ազգահալած քաղաքականությունը անտանելի էին դարձնում աշխատավորների դրությունը, մղում նրանց տնտեսական ու քաղաքական պայքարի։

1890-ական թվականների սկզբից Անդրկովկասի արդյունաբերական կենտրոններում կազմակերպվում են առաջին սոցիալ-դեմոկրատական խմբակները, որոնք զբաղվում են մարքսիզմի պրոպագանդայով։ Սոցիալ-դեմոկրատական աշխատանքը Անդրկովկասում մեծ ծավալ է ստանում 1895 թվականից հետո, երբ Պետերբուրգում Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ ստեղծվեց «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միությունը»։ Լենինյան «Պայքարի միությունը» առաջինն էր Ռուսաստանում, որ գիտական սոցիալիզմի թեորիան միացրեց բանվորական շարժմանը, գործնականում ղեկավարեց բանվորական գործադուլները։

«Սոցիալ-դեմոկրատիան,— նշում է Վ. Ի. Լենինը,— Ռուսաստանում մասսայական է դարձել 1895 թվականի գործադուլների ժամանակից»[1]։

Սոցիալ-դեմոկրատական գաղափարները պարարտ հող են գտնում նաև Բաքվի և Թիֆլիսի բանվորների մեջ։

Թիֆլիսում 1896 թվականին գործում էին մոտ 20 մարքսիստական խմբակներ, որոնց մեջ ընդգրկված էին առաջավոր բանվորներ և ինտելիգենտներ։

Թիֆլիսում և առհասարակ Անդրկովկասում սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները սկզբից ևեթ կառուցվում են ինտերնացիոնալիստական սկզբունքով, որպես ընդհանուր, միասնական կազմակերպություններ բոլոր ազգերի բանվորների համար։ Այդ էին պահանջում Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի համերաշխության և դասակարգային պայքարի շահերը։ Սակայն պրոպագանդիստական աշխատանքի նպատակահարմարությունը, մանավանդ սոցիալ-դեմոկրատիայի կազմավորման սկզբում, անհրաժեշտ էին դարձնում մարքսիստական ինտերնացիոնալ կազմ ունեցող խմբակների հետ միասին, ստեղծել նաև ազգային միատարր կազմ ունեցող խմբակներ, որոնցում հնարավոր էր լինում բանվորներին հասկանալի լեզվով պրոպագանդա և ագիտացիա անել։

Մարքսիստական խմբակների կազմակերպման գործում խոշոր դեր են կատարում ռուս սոցիալ-դեմոկրատները, որոնք Պետերբուրգի և Ռուսաստանի

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 393։

այլ բանվորական կենտրոնների «Պայքարի միություններին» պատկանելու համար ցարական ոստիկանության կողմից ձերբակալվել և վարչական կարգով աքսորվել էին Անդրկովկաս՝ Թիֆլիս, Բաքու, Բաթում և այլ վայրեր։ 1898 թվականին այդ խմբակները միավորվում են, կազմելով ՌՍԴԲՊ Թիֆլիսի կազմակերպություն։ Ստեղծվում է Թիֆլիսի կազմակերպության ղեկավար խումբ։

1894—1898 թվականներին գործադուլային մեծ շարժումներ են տեղի ունենում Թիֆլիսի մի շարք գործարաններում ու ֆաբրիկաներում, մասնավորապես Էնֆիանջյանցի և Բոզարջյանի ծխախոտի ֆաբրիկաներում, Աղելխանովի կաշվի գործարանում, տպարաններում և այլն։ 1898 թվականի դեկտեմբերին խոշոր գործադուլ ծագեց Թիֆլիսի երկաթուղային գլխավոր արհեստանոցներում։ Գործադուլը ղեկավարում էր ՌՍԴԲՊ Թիֆլիսի կազմակերպությունը։

Թիֆլիսի գործարաններում վրացի և ռուս բանվորների հետ միասին աշխատում էին նաև մեծ թվով հայ բանվորներ։ Նրանցից շատերը ակտիվ մասնակցություն ունեին գործադուլային շարժումներին, իսկ առանձին առաջավոր բանվորներ, որոնք գիտեին վրացերեն կամ ռուսերեն լեզուներ, մասնակցում էին վրացական և ռուս սոցիալ-դեմոկրատական խմբակների աշխատանքներին։

Հայ բանվորներին սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մեջ միավորելու գործը հանդիպում էր լուրջ դժվարությունների, նախ այն պատճառով, որ Թիֆլիսում սկզբնական շրջանում բացակայում էին մարքսիստորեն պատրաստված հայ պրոպագանդիստական կադրեր և երկրորդ՝ ավելի վաղ գոյություն ունեցող ազգայնական պարտիաները ամեն կերպ շեղում էին հայ բանվորներին դասակարգային պայքարի խնդիրներից, խանգարում նրանց կազմակերպվելու իրենց պրոլետարական, մարքսիստական կազմակերպություններում։ Դաշնակցական, արմենական և հնչակյան պարտիաների ազգայնական պրոպագանդան մթագնում էր հայ բանվորների դասակարգային գիտակցությունը և նրանց որոշ մասը հետևում էր այդ պարտիաներին։ Եթե նկատի ունենանք նաև 1890-ական թվականների կեսերից սուլթանական կառավարության կողմից Թյուրքիայում կազմակերպած հայկական կոտորածները և դրա հետևանքով տասնյակ հազարավոր հայերի ներգաղթը Անդրկովկաս, ապա պարզ կլինի, թե ինչ աստիճանի շիկացած էր հայ իրականության մեջ ազգայնական մթնոլորտն այդ ժամանակաշրջանում։

Բայց, մասնակցելով շարունակ աճող բանվորական շարժմանը, ավելի հաճախակի շփվելով սոցիալ-դեմոկրատների հետ, ծանոթանալով մարքսիստական գրականությանը, հայ բանվորները ևս սկսում են դասակարգայնորեն կազմակերպվել սոցիալ-դեմոկրատիայի դրոշի տակ։ Հայ առաջին մարքսիստների փոքրաքանակ խումբը՝ Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ս. Սպանդարյանը, Արշ. Զոհրաբյանը, Գ. Ղարաջյանը[1], սոցիալ-դեմոկրատ առաջավոր բանվորներ Մելիք Մելիքյանը (Դեղուշկա), Հ. Փիլոսյանը (Հ. Ադամյանը), Ա. Տեր-Հարությունյանը, Աս. Կախոյանը աշխատանք են ծավալում բանվորների շրջանում, կազմակերպում են մարքսիստական խմբակներ, պայքարում դաշնակ-

[1] Ա. Զոհրաբյանը և Գ. Ղարաջյանը 1905 թվականից հետո դառնում են մենշևիկներ։

ցության և բուրժուական ու մանրբուրժուական մյուս պարտիաների դեմ, դուրս վանում նրանց բանվորական միջավայրից։ 1890-ական թվականների վերջերին մի շարք հայ բանվորներ սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությամբ սկսում են հեռանալ ազգայնական պարտիաներից և հարել սոցիալ-դեմոկրատիային։

1898 թվականին Թիֆլիսում կազմավորվում է հայ բանվորների առաջին սոցիալ-դեմոկրատական մարքսիստական խումբը։

Այդ խմբի կազմակերպման գործում նշանակալից դեր են կատարում մարքսիստ բանվորներ Մելիք Մելիքյանը («Դեդուշկա»), Հայկ Փիլոսյանը, Աս. Կախոյանը (բանվոր Խեչո) և ինտելիգենտ սոցիալ-դեմոկրատ Գ. Ղարաջյանը (Ս. Արկոմեդ)։

Հայկ Փիլոսյանը (հայտնի է նաև Հայկ Ադամյան, Պողոս Փիլոսյան, Հայկ Պողոսյան ազգանուններով) 1898 թվականին 22 տարեկան երիտասարդ էր։ 1896 թվականին նա հայկական կոտորածների ժամանակ Տրապիզոնից փախել էր Անդրկովկաս և Թիֆլիսում աշխատանքի էր մտել Էնֆիանջյանի ծխախոտի ֆաբրիկայում որպես բանվոր։ Այստեղ գործարանում նա շուտով ներգրավվում է մարքսիստական գաղտնի խմբակում, ակտիվ մասնակցում գործադուլային շարժումներին և ապա դառնում սոցիալ-դեմոկրատական աշխատանքի լավագույն կազմակերպիչներից մեկը։ Հայկ Փիլոսյանը առանձնապես մեծ աշխատանք է ծավալում հայ բանվորների շրջանում, ձգտելով ներգրավելու նրանց սոցիալ-դեմոկրատական խմբակներում։

Աս. Կախոյանը, որը նույն տարիներին աշխատում էր Թիֆլիսի Ադելխանովի գործարանում որպես կոշկակար բանվոր և անդամ էր բանվորներից կազմված հնչակյան մի խմբի, իր հիշողություններում Հայկ Փիլոսյանի այդ ժամանակաշրջանի գործունեության մասին հետևյալն է պատմում.

«Այդ ժամանակ Էնֆիանջյանի ծխախոտի գործարանում իբրև հասարակ բանվոր երևաց մի երիտասարդ՝ Հայկ Փիլոսյան ազգանունով։ Նա կազմակերպում էր բանվորներին և հասկացնում նրանց առանձին դասակարգային կազմակերպության անհրաժեշտությունը։ Ծանոթանալով ինձ հետ և իմանալով մեր խմբի գոյության մասին, նա առաջարկում է ինձ թողնել հնչակյան կուսակցությունը և կազմակերպվել դասակարգային հողի վրա։ Այդ ուրախալի հարցը ես դնում եմ մեր խմբի առաջ, որը և վճռում է հրավիրել Հայկին՝ մտնել մեր խմբի մեջ և միասին աշխատել, սակայն Հայկը մերժում է։ Ես շատ շուտ տեսնվում եմ Հայկի հետ և մենք որոշում ենք մեր աշխատանքը միասին կատարել։ Ես Ադելխանովի, նա ծխախոտի գործարաններում, սկսեցինք բանվորներին կազմակերպել»[1]։

Աս. Կախոյանի հիշատակած հայ բանվորների հնչակյան խմբին մարքսիզմի կողմը թեքելու գործում մեծ դեր է կատարում Գանձակի նահանգի Բանանց գյուղացի ներկարար բանվոր Մելիք Մելիքյանը («Դեդուշկան»)։ Նա կրթված բանվոր էր, հմուտ պրոպագանդիստ, տոկուն կազմակերպիչ։ Կանգնելով մարքսիզմի դիրքերի վրա Մելիք Մելիքյանը իր ողջ էությամբ նվիրվում է սոցիալիզմի հաղթանակի համար մղվող պայքարի գործին և այդ գաղափարով տոգորում իր բանվոր ընկերներին։ Մելիք Մելիքյանը հայ բանվորների համար կազմակերպում է մի շարք դասախոսություններ մարքսիզմի թեորիայից։ Նրա հրավերով դասախոսություններ է կարդում Գ. Ղարաջյանը։

[1] «Նոր Աշխարհ», Թիֆլիս, 1922, № 1, էջ 153։

Այդ դասախոսության մասնակից հայ բանվորներից էլ հենց 1898 թվականին կազմակերպվում է մարքսիստական խումբը, խմբի մեջ մտնում են Հայկ Փիլոսյանը, Մելիք Մելիքյանը, Ասատուր Կախոյանը, Թիֆլիսի հայ բարեգործական ընկերության գրադարան-ընթերցարանում ծառայի պաշտոնով աշխատող Գարեգին Կոզիկյանը, Թիֆլիսի երկաթուղային դեպոյի բանվորներ Խ. Քեշիշյանը, Գ. Մկրտումյանը, Արտեմ Տեր-Հարությունյանը, Բոզարջյանի ծխախոտի ֆաբրիկայի բանվորներ Ալ. Վարդանյանը, Պ. Թավլուշյանը և ուրիշները[1]։

Խմբի հետ շարունակում է պրոպագանդիստական աշխատանք տանել Գ. Ղարաջյանը։ Խումբն ընտրում է իր ղեկավար օրգանը, գանձում է անդամավճարներ, հիմնում է դրամարկղ և ընտրում գանձապահ։ Հայ բանվորների մարքսիստական խումբը մեկուսացած չէր գործում Թիֆլիսի մյուս սոցիալ-դեմոկրատական խմբերից։ Մելիք Մելիքյանի, Հայկ Փիլոսյանի և Գ. Ղարաջյանի միջոցով այն կապված էր վրացական և ռուս սոցիալ-դեմոկրատական խմբերի հետ և մտնում էր ՌՍԴԲՊ Թիֆլիսի ընդհանուր կազմակերպության մեջ։ Մելիք Մելիքյանը նույնպես 1900 թ. դառնում է ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի անդամ։

1898—1900 թվականներին խումբը կազմակերպում է բանվորների շրջանում պրոպագանդիստական-ագիտացիոն բեղմնավոր աշխատանք։ Խմբի անդամները Թիֆլիսի մի շարք ձեռնարկություններում, ինչպես, օրինակ, Էնֆիաջյանի, Սաֆարովի, Բոզարջյանի ծխախոտի ֆաբրիկաներում, Ադելխանով և Փարսադանովի կոշկի և կաշվի գործարաններում կազմակերպում են բանվորական խմբակներ և ղեկավարում են մի շարք գործադուլներ։

Մելիք Մելիքյանը, բացի այդ, քաղաքի մի քանի մասր արհեստանոցներում աշխատող բանվորներից կազմակերպել էր առանձին խմբակ, որի հետ պարապում էր։

Խումբն իր կազմով ակտիվ մասնակցություն է ցուցաբերում 1900 թվականին քաղաքից դուրս կազմակերպված Թիֆլիսի 500-ից ավելի բանվորների մեծ մայովկային։ Մայովկայում ճառերով հանդես են գալիս Միխո Բոչորիշվիլին, Մելիք Մելիքյանը և շատ ուրիշ բանվորներ։ 1900 թվականի մայիսմեկյան տոնակատարությունը սկիզբ դրեց հետագա տարիների քաղաքական բացահայտ ցույցերի և գործադուլների։

Այդ գործադուլների ժամանակ ձերբակալվում և աքսորվում են մի շարք սոցիալ-դեմոկրատ բանվորներ, որոնց թվում նաև հայ սոցիալ-դեմոկրատական խմբի անդամներից։ Մելիք Մելիքյանը և Ասատուր Կախոյանը իրենց գործունեությունը տեղափոխում են Բաքու։ Բաքվի բանվորական շարժման մեջ ևս շուտով աչքի է ընկնում Մ. Մելիքյանը, որպես կազմակերպիչ, պրոպագանդիստ, լենինյան «Իսկրա»-ի տարածող։ 1901 թվականին նա Բաքվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ այնպիսի հեղինակություն ուներ, որ Լ. Կեցխովելու և Բ. Կնունյանցի հետ միասին ընտրվում է ՌՍԴԲՊ Բաքվի լենինյան — իսկրայական առաջին կոմիտեի անդամ։ 1903 թվականին Արտեմ Տեր-Հարությունյանը Գ. Կոզիկյանին ուղարկած նամակում հետևյալն էր հաղորդում Մ. Մելիքյանի մասին.

---

[1] Տես «Նոր Աշխարհ», 1922, № 1, էջ 153, Բանվոր Խեչոյի հիշողություններ, ինչպես նաև Մարքսիզմ-լենինիզմի ինստ. Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 31, գ. 170, թ. 9։

[2] Տես Ա. Կախոյան, Հեղափոխական անցյալից, 1926, էջ 23։

«Մելիքը Բաքվում մեծ ժողովրդականություն ունի և շատ է սիրված բանվորական խավերի մեջ»[1]։

Աս. Կախոյանը Բաքվում նույնպես կազմակերպչական աշխատանք է տանում բանվորների մեջ և մասնակցում է Բ. Կնունյանցի մարքսիստական խմբակին։

Թիֆլիսի հայ բանվորների մարքսիստական խումբը ծավալելով իր աշխատանքը բանվորների շրջանում, չի բավարարվում միայն բանավոր պրոպագանդայով և ագիտացիայով։ Նա քայլեր է կատարում ստեղծելու անլեգալ բանվորական մամուլ։ 1900 թվականի սկզբից Հ. Փիլոսյանի, Գ. Կոզիկյանի և Աս. Կախոյանի նախաձեռնությամբ սկսում է լույս տեսնել «Բանվոր» վերնագրով հայերեն անլեգալ ձեռագիր թերթը։ Թերթի ճակատին գրված էր սոցիալ-դեմոկրատիայի նշանաբանը՝ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք», իսկ վերնագրի տակ՝ «Հայկական սոցիալիստական բանվորական օրգան»։ 1900 թվականին լույս էր ընծայվել թերթի 21 համար։ 1901 թվականին ևս մեկ համար լույս տեսնելուց հետո դադարում է՝ Հ. Փիլոսյանի, Գ. Կոզիկյանի, Աս. Կախոյանի ձերբակալվելու հետևանքով։ «Բանվոր»-ը լույս էր տեսնում ժուռնալի ֆորմատով։

«Բանվոր»-ի մասին իր հիշողություններում Աս. Կախոյանը պատմում է.

«Թերթի թե՛ խմբագիր և թե՛ ձեռա-տպագրողներ Գարեգինն ու Հայկն էին, իսկ ես՝ իբր տեղեկատու, լուրեր էի հաղորդում գործարանի մեջ տեղի ունեցող հետաքրքիր դեպքերի մասին, որոնք զետեղվում էին «Բանվոր»-ի մեջ Բանվոր խեչո ստորագրությամբ։ «Բանվոր»-ը գրվում էր գրասենյակային սովորական թերթի վրա։ Նա թարգմանաբար տալիս էր Դիկշտեյնի «Ով ինչով է ապրում» և Լիբկնեխտի «Սարդերն ու ճանճերը» խորագիրը կրող պատմվածքները»[2]։

Դժբախտաբար մեր ձեռքը չեն հասել «Բանվոր»-ի ձեռագրի համարները, բայց նրա մասին ընդհանուր գաղափար կարելի է կազմել թերթի վերջին համարների հիմնական հոդվածների բովանդակությունից, որ թարգմանաբար բերված է Հայկ Փիլոսյանի և մյուսների վերաբերյալ Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության գործերում[3]։

«Բանվոր»-ում հրատարակվում էին ինքնուրույն և թարգմանական հոդվածներ, բանվորական շարժման խրոնիկա և արտաքին տեսություններ։ Թերթը պրոպագանդում էր բանվոր դասակարգի ինքնուրույն քաղաքական պարտիայի մեջ կազմակերպվելու և ցարիզմի ու կապիտալիզմի դեմ քաղաքական պայքար մղելու գաղափարը։ Թերթի միջով կարմիր թելի նման անցնում է այն հիմնական միտքը, որ պայքարի հաջողության համար Ռուսաստանի և Անդրկովկասի բոլոր ազգերի բանվորները պետք է միավորվեն միասնական, ինտերնացիոնալ կազմակերպություններում։

1901 թվականի առաջին համարի առաջնորդողում, որ կրում է «20-րդ դարը» վերնագիրը, խոսելով Ռուսաստանի պրոլետարիատի մերձավոր և վերջնական նպատակների մասին, թերթը ոգեշնչող խոսքերով հայտնում էր հաստատ համոզմունք սոցիալիզմի անպայման հաղթանակի մասին 20-րդ դարում։

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստ. Հայկական ֆիլիալի արխիվ. ֆ. 10, գ. 11։

[2] «Նոր Աշխարհ», 1922, № 1, էջ 153։

[3] Տես Մարքսիզմ-լենինիզմի ինստ. Վրացական ֆիլիալի արխիվ. ֆ. 31, գ. 170. թթ. 156—166, 194—198։

«Նա, բանվոր ժողովուրդը,— ասվում էր առաջնորդողում,— համոզված է, որ այս դարում պետք է իրագործվի նրա սրտի անկեղծ ցանկությունը, նրա փրկությունը, նրա ազատությունը — մի խոսքով նրա իդեալները։ ...Այս 20-րդ դարում նա կհասնի վերջնական հաղթանակի, ոչնչացնելով մասնավոր սեփականությունը, հանրայնացնելով մեքենաները, գործարանները, շինությունները։ ...Դա երազ չէ, այլ անհրաժեշտություն, կարիք, որ պետք է այս դարում իրականանա։ Դա մեր բանվորների ցանկություններն են և ձգտումները։ Թող խղճուկ հոգու տեր մարդիկ և կարճամիտ պարազիտները համարեն այդ ֆանտազիա և անհնարին բան։ Կյանքն ունի իր ընթացքը և առանց կանգ առնելու ընթանում է այդ ուղիով»։

Այնուհետև առաջնորդողը պատմում է կապիտալիստական հասարակարգում բանվոր դասակարգի վիճակի, բուրժուազիայի դեմ նրա մղած պայքարի մասին։ Խոսելով Ռուսաստանի և Կովկասի պրոլետարիատի խնդիրների մասին, թերթը նշում էր. «Մեր մերձավոր նպատակն է — տապալել ինքնակալությունը և ձեռք բերել՝ 1. մամուլի ազատություն, 2. հավաքվելու ազատություն, 3. ընտրական ազատություն։ Առաջ ցարն ու բուրժուան ամեն ինչ էին, բանվորը՝ ոչինչ, այժմ բանվորը ամեն ինչ է, ցարն ու բուրժույը՝ ոչինչ. ահա կյանքը»։

«Բանվոր» թերթի 1900 թվականի նոյեմբերի 12-ի համարում զետեղված «Խորհուրդներ» հոդվածի շարունակության մեջ (4-րդ գլուխ) խոսվում է տարբեր ազգերի բանվորների ինտերնացիոնալ համերաշխության մասին։ Մենք,— ասված է հոդվածում,— աշխատելով գործարաններում միասին, ենթարկվում ենք տերերի, կառավարության և այլ ձրիակերների կողմից թալանի ու բռնությունների։ Որպեսզի մենք հաջողությամբ պայքարենք մեր իրավունքների համար, պետք է ձեռք մեկնենք մեկ-մեկու, բոլոր ազգերի բանվորներս համերաշխ կերպով հանդես գանք գործադուլներում. այլապես չենք հասնի մեր նպատակին։ Գործարանատերերն են իրենց շահերից դրդված աշխատում ազգային գժտություններ առաջացնել բանվորների մեջ։

Նույն համարում զետեղված է «Նամակ հայ բանվորներին» վերնագրով հոդվածի շարունակությունը։ Այդտեղ խոսվում է դեմոկրատական ռևոլյուցիայի մեջ բանվոր դասակարգի դերի, նրա գործունեության եղանակի և առանձնապես զինված ապստամբության կազմակերպման խնդիրների մասին։

«Բարեգործության դիմակի տակ» հոդվածում, որ ստորագրված է «Դիոգենես» (հավանաբար Հայկ Փիլոսյանն է), «Հայ բարեգործական ընկերության» մեջ տիրող բարքերի օրինակով մերկացվում է բուրժուական բարեգործության հակապրոլետարական բնույթը։

«Բանվոր»-ի դեկտեմբերի 25-ի համարում լույս են տեսել «Խորհուրդներ» հոդվածի 5-րդ գլուխը, Դիոգենեսի «Իմ վշտերը» և այլն։ «Ներքին լուրեր» բաժնում հաղորդվում է Եկատերինոսլավի «Южный рабочий листок»-ի խմբագրի ձերբակալման և տպարանի խուզարկության մասին, Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտի ինսպեկտորի կարգադրության մասին, որ ուսանողներն այլևս կիրակնօրյա դպրոց չհաճախեն՝ բանվորների հետ հանդիպումներ չունենալու, նրանց մեջ գործադուլների պրոպագանդա չանելու համար։ Հաղորդելով այս լուրը, թերթը եզրակացնում էր. «Այս նշանները ցույց են տալիս, որ կառավարությունը այլևս անզոր է զսպել շարժումը և նման նախազգուշացումներով ցանկանում է կանխել այն, ինչ արդեն անհնարին է։ Այն առաջացել է իրենից,

կառավարությունից և իր իսկ ստեղծած այդ շարժումը գերեզման կփորի կառավարության համար»։

Կարևոր արժեք են ներկայացնում այն հոդվածները, որոնք պատրաստվել էին հրապարակվելու «Բանվոր»-ի հետագա համարներում, բայց բռնագրավվում են ոստիկանության կողմից։

Այդ նյութերի մեջ մեծ հետաքրքրություն է ներկայացնում «1900 թվականը մեզանում» ընդարձակ հոդվածը[1]։

Հոդվածում հանրագումարի է բերվում բանվորական շարժումը Կովկասում և առաջադրվում են ապագա խնդիրները։

«1900 թվականը,— նշում է հեղինակը,— Կովկասի բանվորական շարժման պատմության մեջ անպայման կգրավի բավական հայտնի տեղ։ Այդ տարին Կովկասի բանվոր դասակարգի համար նոր փուլի սկիզբը կկազմի։

Հավաստելով կապիտալիզմի զարգացման փաստը Կովկասում և պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև ընթացող պայքարը, հոդվածագիրը տալիս է Թիֆլիսի բանվորների 1900 թվականի մայիսմեկյան տոնակատարության և մի շարք գործադուլների ցայտուն նկարագրությունը։ Հոդվածում վերլուծվում են նաև շարժման մեջ նկատված թերությունները, նրանց հաղթահարման ուղիները։

Հոդվածում առաջադրվում են հետևյալ հիմնական խնդիրները, որպես անհրաժեշտ պայման բանվորական շարժման հետագա վերելքի համար.— ուժեղացնել սոցիալ-դեմոկրատիայի կապը բանվորների հետ, ուժեղացնել պրոպագանդան ու ագիտացիան բանվորների, ինչպես նաև ուսանող երիտասարդության մեջ, ամրապնդել բանվորների ինտերնացիոնալ համերաշխությունը, ստեղծել անլեգալ տպագիր օրգան Կովկասի ժողովուրդների լեզուներով սոցիալ-դեմոկրատական իդեաները տարածելու համար, ստեղծել պարտիական համակովկասյան կոմիտե, որը միավորի Կովկասի բոլոր արդյունաբերական քաղաքների բանվորների պայքարը, է՛լ ավելի մոտ կապ ստեղծել Ռուսաստանի բանվորների հետ և այլն։

Ժանդարմերիայի գրված գրագրությունների մեջ կա նաև Աս. Կախոյանի Բաքվից 1901 թվականի փետրվարի 18-ին գրած նամակ-ինֆորմացիան «Բանվոր»-ում զետեղելու համար, որի մեջ տեղեկություններ են հաղորդվում Բաքվի բանվորների վիճակի, նրանց գործադուլների ու պայքարի մասին։

«Բանվոր»-ի նյութերի այս համառոտակի թվարկումից պարզ է դառնում թերթի հետևողական սոցիալ-դեմոկրատական, ինտերնացիոնալիստական ուղղությունը և այն կարևոր դերը, որ նա խաղացել է հայ բանվորների դասակարգային քաղաքական ինքնագիտակցության զարգացման գործում բանվորական շարժման արշալույսին։ Ձեռագիր, մի քանի տասնյակ օրինակով հրատարակված լինելով հանդերձ, նա ձեռքից-ձեռք անցնելով լայն տարածում է գտել Թիֆլիսի բանվորների մեջ և նվաճել նրանց համակրանքը։ Այդ է վկայում նաև Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետի 1903 թվականի փետրվարի 12-ի զեկուցումը Մոսկվայի ժանդարմական վարչության պետին.որի մեջ՝ խոսելով «Բանվոր»-ի մասին, նա հարկադրված է նշելու, որ «Բանվորները լրագիրը կարդում էին սիրով և այն հայ բանվորների մեջ քարոզելով ընդհանուր, բոլոր բանվորների հեղափոխական շարժման հետ ձուլվելու

[1] Տես Մարքսիզմ-լենինիզմի ինստ. Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 31, գ. 170, էջ 173—178։

միտքը՝ շոշափելի հաջողություն ուներ։ Բանվորական հարցի վասին վարչությանս կատարած շատ գրագրություններից ու հարցաքննություններից երևում է, որ այդ շարժմանը մասնակից են բազմաթիվ հայեր...»[1]։

«Բանվոր»-ի հրատարակիչները եռանդուն կերպով գործում էին այն ուղղությամբ, որպեսզի թերթը դարձնեին տպագիր։ Նրանք հավաքում էին տառեր, տպագրական պարագաներ, բայց ձերբակալվելով հնարավորություն չեն ունենում իրագործելու այդ մտադրությունը։

Հայ սոցիալ-դեմոկրատ բանվորների խումբը 1898—1900 թվականներին այսպիսով կատարում է նշանակալից աշխատանք հայ բանվորների դասակարգային ինքնագիտակցության բարձրացման, նրանց սոցիալ-դեմոկրատական ինտերնացիոնալ դրոշի տակ կազմակերպելու ուղղությամբ։ Խմբի մի շարք անդամներ աչքի ընկնող գործունեություն են ծավալում ոչ միայն Թիֆլիսի, այլև Անդրկովկասի մյուս արդյունաբերական վայրերի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների շարքերում։ Նրանք ակտիվ մասնակցություն են ունենում Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի բանվորական գործադուլներին։ 1900 թվականին խմբի եռանդուն ջանքերով Թիֆլիսում ձեռնարկվում է հիմնվելու բանվորական ապահովագրական դրամարկղ՝ «Թիֆլիսի բանվորական միություն» անունով՝ իր ճյուղերով զանազան գործարաններում։ Դրամարկղը օգնության էր հասնում բանվորներին՝ գործադուլների, հիվանդությունների, դժբախտ դեպքերի ժամանակ, նպաստ էր տալիս բանտարկված ընկերներին, նյութական աղբյուր էր հանդիսանում ռևոլյուցիոն գրականության հայթայթման, թռուցիկների հրատարակման, ագիտացիայի և պրոպագանդայի կազմակերպման համար։ «Թիֆլիսի բանվորական միություն» կանոնադրության նախագծում, որ կազմել էր Հ. Փիլոսյանը, «Միության» նպատակների մասին ասվում էր.

«1. Թիֆլիսի բանվորական միության նպատակն է օգնել բանվորներին իր առկա գումարներից՝ հիվանդության, դժբախտ դեպքերի, ծերության, աշխատանքի անընդունակության ժամանակ, 2. նյութապես օժանդակել բանվորներին գործադուլների, աշխատանքի և կապիտալի ընդհարումների, տարաձայնությունների ժամանակ, որոնք անխուսափելիորեն տեղի են ունենում արդյունաբերական աշխարհում։ Այդ նպատակով միությունը հիմնում է ընդհանուր կենտրոնական դրամարկղ բոլոր անդամների դրամական մասնակցությամբ, ինչպես նաև տեղական դրամարկղներ զանազան բանվորական խմբակներում։ Կենտրոնական դրամարկղը բավարարում է ընդհանուր կարիքները, իսկ տեղական դրամարկղները՝ իրենց խմբակների մասը պահանջմունքները»[2]։

Հ. Փիլոսյանի մոտ հայտնաբերված տետրակից երևում է, որ Էնֆիանջյանի ծխախոտի ֆաբրիկայի բանվորական դրամարկղում 1900 թվականի վերջին առկա է եղել 105 ռուբլի 26 կոպ. փող, 1901 թվականի հունվարին այդ գումարը հասել է 125 ռ. 86 կոպեկի[3]։ Այլ գործարանների նման դրամարկղներ ունեցել են ավելի զգալի գումարներ։

Բանվորական միության անդամները ունենում էին գաղտնի հավաքույթներ, որտեղ քննարկում էին տնտեսական ու քաղաքական հարցեր։ Միությունը կազմված էր ինտերնացիոնալ սկզբունքով։ Նրա ակտիվ անդամները սոցիալ-

[1] «Նորք», 1925, գիրք 5—6, էջ 441։
[2] Մարքսիզմ-լենինիզմի ինստ. Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 31, գ. 170, թ. 1։
[3] Նույն տեղում, թ. 90։

դեմոկրատ բանվորներ էին՝ Հ. Փիլոսյանը, Սանդրո Բաջիաշվիլին, Գ. Կոզիկյանը, Ի. Մանջավիձեն, Գ. Մկրտումյանը, Ա. Վարդանյանը, Ի. Սուլխանովը և ուրիշները։

Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության գործակալական հաղորդագրության մեջ նշվում էր, որ «այդ խմբակը... կազմված է քաղաքի տարբեր գործարանների և արհեստանոցային ցեխերի առաջավոր [սոցիալ]-դեմոկրատ բանվորներից, որոնք նպատակ ունեն միավորելու Թիֆլիս քաղաքի բոլոր բանվորական մասնակի գաղտնի խմբակները ավելի կազմակերպված և հաջող պայքար մղելու համար կառավարության դեմ։ Ուստի խմբակի անդամների գործունեությունը բաժանվում է մասնավոր բնույթի՝ ...իրենց գործարաններում դրամարկղների հիմնում, խորհրդակցությունների դումարում, գործադուլների կազմակերպում և այլն, և ընդհանուր բնույթի՝ անլեգալ գրականության տարածում, բանավոր պրոպագանդա, հավաքույթների և խորհրդակցությունների դումարում՝ քննարկելու համար ընդհանուր կազմակերպության ծրագրի մշակման, դրամարկղի հիմնադրման և պրոպագանդայի նպատակներով հեկտոգրաֆի պատրաստման հարցերը։

Մասսայական հավաքույթներ դումարվել են Խոջավանքի հայկական գերեզմանատանը, իսկ ավելի սահմանափակ կազմ ունեցող, ինչպես և ընդհանուր ու մասնավոր հավաքույթներ՝ Արծրունու քարվան-սարայում և հատկապես այդ քարվան-սարայում գտնվող Տեր-Հարությունյանի կոշկակարանոցում, ինչպես նաև Դանիելովի թեյարանում, «Բանվոր դասակարգ» թեյարանում, «Օսարով» պանդոկում և «Անատոլիա» ճաշարանում, որտեղ կենտրոնանում են շատ հայ բանվորների թղթակցությունները»[1]։

Գործակալական հաղորդագրության մեջ այնուհետև բերվում են մի շարք ժողովների ու հավաքույթների մասին փաստեր. դրանցից մեկում ասված է. «Տեր-Հարությունյանի կոշկակարանոցում ամեն օր գալիս են հայ բանվորներ, կարդում են այնտեղ ինչ-որ թերթեր և նամակներ, նմանապես «Բանվոր դասակարգ» թեյարանում ամեն օր հավաքվում են գրույցի համար բնիկ բանվորները... Իսկ փետրվարի 3-ին (1901 թ.— Վ. Ա.) երեկոյան ժամը 8-ին Դանիելովի թեյարանում նկատվեց Բոզարջյանի ծխախոտի ֆաբրիկայի բանվորների հավաք։ Այդ հավաքին ներկա էին՝ Բաջիևը, Մանջավիձեն, Փիլոսյանը և Կոզիկյանը»[2]։

1901 թվականի փետրվարի 23-ի լույս 24-ի գիշերը ժանդարմերիան գործակալական տվյալների հիման վրա կատարեց խուզարկություն վերոհիշյալ թեյարաններում և բանվորական կազմակերպության ակտիվ անդամների բնակարաններում։ Ձերբակալվեցին Հ. Փիլոսյանը, Ա. Բաջիաշվիլին (Բաջիևը), Գ. Կոզիկյանը և մյուսները։ Բաքվում ձերբակալվեց Աս. Կախոյանը։ Հ. Փիլոսյանի և Գ. Կոզիկյանի մոտ հայտնաբերվեցին «Բանվոր» ձեռագիր թերթի մի քանի համարները, չհրատարակված նյութերը հերթական համարի համար, նամակագրություններ, ուսոլյուցիոն գրականություն, տպագրական շրիֆտներ և այլ նյութեր։ «Բանվորական խմբակի» անդամների մասին կազմած տեղեկագրում Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչությունը հետևյալ բնութագիրն էր տալիս Հ. Փիլոսյանի գործունեությանը.

«Պողոս Փիլոսյանը հանդիսանում է խմբակի գլխավոր գործող անձը. նա

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստ. Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 31, գ. 170, թ. 9։
[2] Նույն տեղում, թ. 12։

մասնակցել է 1900 թվականի դեկտեմբերի 17-ին Խոջավանքի գերեզմանատանը կոշկակարների և բանվորների հավաքույթին, երբ քննարկվում էին ընդհանուր դրամարկղի հարցերը, շարունակ լինում է Տեր-Հարությունյանի կոշկակարանոցում տեղի ունեցող հավաքույթներին, կազմել է ընդհանուր դրամարկղի կանոնադրությունը, հարուցել է հեկտոգրաֆի հարցը՝ պրոկլամացիաների և ձեռագիր բանվորական ժուռնալի համար, որի հրատարակության գործունյա մասնակցություն է ունենում, բացի սրանից նա հանդիսանում է պրոպագանդիստ՝ Ադելխանովի կաշվի գործարանում և Էնֆիանջյանի ծխախոտի ֆաբրիկայում ու վերահսկիչ՝ հիշյալ գործարանի և ֆաբրիկայի բանվորական դեմոկրատական դրամարկղների։ Ադելխանովի գործարանի դրամարկղի վերահսկիչ նա ընտրվեց սույն տարվա հունվարի 14-ի հավաքում»[1]։

Էնֆիանջյանի ֆաբրիկայի բանվորների շրջանում Հ. Փիլոսյանի գործունեությունը պարզում է նաև իր՝ Փիլոսյանի հետևյալ նամակը՝ գրված բանտից ֆաբրիկայի աշխատակից Գարեգինին.

«Գ. Ս. Ասեք բանվորներին, որ մենք հանդիպել ենք նոր պանդոկում։ Եթե իմ մասին հարցում կլինի, հապա թող ասեն, որ նա մեզ մոտ ոչինչ չի ընթերցել, թող ասեն, որ ինձ մոտ բերել է միայն ձեր դրամարկղի փողերը և թող ասեն, որ մենք երբեք փող չենք ուղարկել բանտարկյալներին։ Եվ թող իմ մասին էլ ոչինչ չասեն։ Պողոս Փիլոսյան»[2]։

Բանտում Հ. Փիլոսյանը, ինչպես և մյուս բանվորները ցուցաբերեցին արժանի հաստատակամություն և գաղտնապահություն։ Որենց ցուցումներում նրանք համարձակ հայտարարում էին, որ գործել են բանվոր դասակարգի շահերի պաշտպանության համար ընդդեմ կապիտալիստների և նրանց պաշտպան՝ կառավարության։

«Բանվորական խմբակի» կալանավորված անդամները պահվում էին Մետեխի բանտում։ Նրանց հաջողվում էր տարբեր միջոցներով կապ պահպանել Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության հետ, ստանալ նամակներ, գրականություն։ 1901 թվականի նոյեմբերին ստեղծվել էր Թիֆլիսի լենինյան իսկրայական Կոմիտեն, որը լայն աշխատանք էր ծավալել քաղաքում և գավառներում։

1901—1902 թվականներին մի շարք ձերբակալությունների հետևանքով Մետեխի բանտ են բերվում սոցիալ-դեմոկրատական շատ աչքի ընկնող գործիչներ, որոնց թվում նաև Թիֆլիսի Կոմիտեի մի քանի անդամներ։ Այդ շրջանում Հ. Փիլոսյանի, Աս. Կախոյանի և մյուսների հետ Մետեխի բանտում էին Վ. Ի. Լենինի մոտիկ զինակից, կրթված մարքսիստ Վիկտոր Կուրնատովսկին, Թիֆլիսի Կոմիտեի անդամներ Զ. Զոդրիշվիլին, Ա. Օկուաշվիլին, Վ. Ցաբաձեն, Գ. Ղարաջյանը, սոցիալ-դեմոկրատ ուսուցիչներներ Գ. Թելիան, Ի. Լուգինը, Պ. Մոնտինը, Ի. Ֆրանչեսկին, Ս. Ալիլուևը, Ռ. Նինուան, Լ. Սկորնյակովը, Մ. Միրաքյանը և ուրիշները։ 1902 թվականի աշնանը Մետեխի բանտ է բերվում նաև Բաքվում ձերբակալված Լ. Կեցխովելին։ Զնայած բանտային խիստ ռեժիմին բանտարկյալները գտնում էին հնարք միմյանց հետ կապվելու և տեղեկանալու դրսում կատարվող ուսուցիչ իրադարձությունների մասին։

Այսպես, օրինակ, Աս. Կախոյանը պատմում է. թե ինչպես Մ. Միրաքյանը (Շանթ) բանտ գալուց ետք ուղարկում է իրեն, Փիլոսյանին և մյուսներին մի

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստ. Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 31, գ. 170, թ. 10։
[2] Վրաց. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 7, գ. 330, թ. 37։

նամակ՝ կարևոր տեղեկություններով սոցիալ-դեմոկրատական աշխատանքի մասին հայ բանվորների շրջանում։

Այդ նամակում, ինչպես հաղորդում է Աս. Կախոյանը, Մ. Միրաքյանը (Շանթը) գրում էր.

«Թանկագին ընկերներ, դրսի ընկերներից ձեզ ողջույն եմ բերել. բացի այդ, ուրախությամբ պիտի հայտնեմ, որ այժմ ձեր ձեռագիր «Բանվոր»-ի փոխարեն շարունակաբար լույս են տեսնելու տպագիր թռուցիկներ և շուտով լույս կտեսնի մեր թերթը։ Սրանով ուզում եմ ասել, թե հայ բանվորական մասսայի ղեկավարող մարմին է ստեղծվել, որը քաղաքականապես պիտի դաստիարակի նրան ու դնե դասակարգային շարժման ուղիղ ճանապարհի վրա։ Կեցցե՛ պրոլետարիատի կռիվը։ Ընկերական համբույրներով՝ Շանթ»[1]։

Մ. Շանթի այս նամակը, ըստ Աս. Կախոյանի, գրված է 1902 թվականի ապրիլի վերջերին, այսինքն այն ժամանակաշրջանում, երբ Ռիգայից Թիֆլիս էր եկել արդեն Ստեփան Շահումյանը և ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի հետ կապվելով ձեռնարկել էր հիմնելու հայերեն սոցիալ-դեմոկրատական լենինյան — իսկրայական ուղղության անլեգալ թերթ, ինչպես նաև կազմակերպելու «Հայ-սոցիալ-դեմոկրատների միությունը»։ Նամակում Մ. Միրաքյանը, անշուշտ, այդ է ակնարկում։ Եվ իրոք, չանցած մեկ-երկու ամիս Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ա. Զոհրաբյանի և Ա. Խումարյանի ջանքերով հիմք է դրվում «Հայ-սոցիալ-դեմոկրատների միությանը», իսկ հոկտեմբերին լույս է տեսնում նրա օրգանը՝ «Պրոլետարիատ» անլեգալ թերթը։

Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը «Պրոլետարիատ» թերթում հրապարակած իր «Մանիֆեստում» հռչակում էր իրեն, որպես ՌՍԴԲՊ-ի մի ճյուղը և ամբողջովին համերաշխվում էր լենինյան «Իսկրա»-ի ծրագրին։ Վ. Ի. Լենինը ջերմորեն ողջունեց Հայ սոցիալ-դեմոկրատների միության հիմնումը և «Պրոլետարիատ»-ի լույս ընծայումը։ «Պրոլետարիատ»-ի հետ Լենինը ծանոթանում է 1903 թվականի հունվարին, Լոնդոնում, երբ նա ստանում է թերթի համարը և մի գրախոսական նրա մասին «Իսկրա»-ում զետեղելու համար։ Վ. Ի. Լենինը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում դեպի Հայ սոցիալ-դեմոկրատների միության «Մանիֆեստը», հատկապես ազգային հարցի մասին նրա դրվածքը։ Չբավարարվելով ստացված գրախոսականով Լենինը ցանկանում է ունենալ «Պրոլետարիատ» թերթի ռուսերեն թարգմանությունը։ Այդ նպատակով նա դիմում է Ժնև, Գ. Վ. Պլեխանովին, որպեսզի վերջինս Ի. Խ. Լալայանցի կամ ուրիշների միջոցով կազմակերպի «Պրոլետարիատ»-ի ռուսերեն թարգմանությունը։ 1903 թվականի հունվարի 28-ին Վ. Ի. Լենինը գրում էր Գ. Վ. Պլեխանովին.

«Հայկական «Պրոլետարիատ»-ը... ես այստեղ արդեն մի քանի օր է ստացել եմ և մի ձեռագիր (հոդված նրա մասին). [դա արդեն, ըստ երևույթին № 33-ի համար է, և ես դեռ չեմ ընտրել։ Համենայն դեպս չի խանգարի բերել այնտեղից ինչ հետաքրքիր է։ Ես դեռ Ձեզ կգրեմ այդ մասին] կաշխատեմ զետեղել № 33-ում։

Ուղարկում եմ Ձեզ և «Պրոլետարիատ»-ը։ Բարի եղեք խնդրել Լալայանցին կամ ուրիշ որևէ մեկին բարգմանելու այստեղից ամբողջովին այն ամենը ինչ վերաբերում է նացիոնալիզմին ու ֆեոդալիզմին և ՇՈՒՏԱՓՈՒՅԹ ուղար-

[1] Ա. Կախոյան, Հեղափոխական անցյալից, 1926, էջ 59։

կել ինձ։ Պետք է դրանց մասին հոդված գետեղել անպայման (ուղարկված հոդվածը կարիք ունի ուղղումների, իսկ դրա համար հարկավոր է տեքստը)»[1]։

Ստանալով ցանկացած թարգմանությունը Վ. Ի. Լենինը ինքն անձամբ գրում է հոդված «Հայ սոցիալ-դեմոկրատների Մանիֆեստի մասին» և հրապարակում «Իսկրա» թերթի 1903 թվականի №-33-ում[2]։

Մետեխի բանտում, որոշ ժամանակից հետո, Հ. Փիլոսյանին, Աս. Կախոյանին, Ռ. Կողիկյանին տեղավորում են այն ընդհանուր կամերան, ուր գտնվում էին Վ. Կուռնատովսկին, Ի. Լուզինը, Ի. Ֆրանկչեսկին, Զ. Զոդրիշվիլին, Գ. Ղարաջյանը, Վ. Ցաբաձեն և ուրիշները։ Այդ կամերայում նրանք Վ. Կուռնատովսկու ղեկավարությամբ ձեռք են բերում քաղաքական-թեորիական լուրջ պատրաստություն։ Կամերայում Վ. Կուռնատովսկին կազմակերպում է կալանավորների համար դպրոց, ուր ինքը դասավանդում է քաղաքատնտեսություն, պատմություն, աշխարհագրություն։ Մեծ տպավորություն են թողնում նրա զրույցները պարտիայի առաջնորդ Վ. Ի. Լենինի մասին, որի հետ միասին աքսորումն էր եղել և միատեղ աշխատել էր արտասահմանում Վ. Կուռնատովսկին։ Այդտեղ, կամերայում և ամբողջ բանտում պարտիական կյանքը աշխույժ կերպով շարունակում էր գործել։ Տեղի էին ունենում դիսկուսիաներ, պարտիական հարցերի սկզբունքային քննարկում։ Ռևոլյուցիոն մարքսիստները Վ. Կուռնատովսկու ղեկավարությամբ հակահարված էին տալիս էկոնոմիստներին։ Բանտում գաղտնի ճանապարհներով ստացվում էին Թիֆլիսի, Բաքվի ս.-դ. կոմիտեների հրատարակությունները, լենինյան «Իսկրա»-ն։

Աս. Կախոյանը հիշում է, որ բանտում նրանք, օրինակ, ստացան «Իսկրա» թերթի այն համարը, որտեղ տպված էր ՌՍԴԲՊ-ի ծրագրի նախագիծը և առաջարկված էր ընկերներին հայտնելու իրենց կարծիքը նախագծի մասին։ «Ընկերները,— գրում է Կախոյանը,— սկսեցին ծրագրի յուրաքանչյուր կետը քննել և ընդունել։ Ռ. Ղարաջյանը գտավ, որ ծրագիր կազմող ընկերները մոռացել են «ամուսնության» վերաբերյալ կետը, ուստի անհրաժեշտ է ավելացնել։ Այդ առաջարկի վրա ընկ. Վ. Կուռնատովսկին ծիծաղեց, բայց երբ Ղարաջյանն սկսեց պնդել իր առաջարկը, նա խիստ քննադատության ենթարկվեց ընկ. Կուռնատովսկու կողմից»[4]։

1902 թվականի աշնանը նույն այդ ընդհանուր կամերայում ստացվեց լույս տեսած հայերեն առաջին տպագիր անլեգալ «Պրոլետարիատ» թերթը։ Թերթում զետեղված «Հայ սոցիալ-դեմոկրատների միության Մանիֆեստը» թարգմանվում է ռուսերեն, ըստ երևույթին տեղում՝ կամերայում, որպեսզի նրա հետ ծանոթանային Վ. Կուռնատովսկին և մյուս ռուս ու վրացի ընկերները[5]։

Մոտ երկու տարի բանտարկությունից ու երկարատև հարցաքննությու-

---

[1] „Ленинский сборник", IV, էջ 207—208։

[2] Տես Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 408—412։

[3] ՌՍԴԲՊ ծրագրի նախագիծը հրատարակված է «Իսկրա» թերթի 1902 թ. հունիսի 1-ի № 21-ում։

[4] Ա. Կախոյան, Հեղափոխական անցյալից, էջ 65—66։

[5] «Պրոլետարիատ»-, Մանիֆեստի թարգմանությունը, ինչպես նաև Մարքսի և Էնգելսի «Կոմ. մանիֆեստի» 1 գլխի ռուսերեն թարգմանությունը և այլ նյութեր միասին պահվում էին թիթեղյա մի արկղում, № 31 կամերայի հատակի տակը։ Այդ նյութերն այժմ պահվում են Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվում։

նից հետո ցարական իշխանությունները «Բանվորական խմբակի» անդամներից մի մասին ազատեցին կալանքից, հանձնելով ոստիկանության բացարձակ հսկողությանը, իսկ մի մասին էլ աքսորեցին վարչական կարգով։

Գարեգին Կոզիկյանը, որպես թյուրքահպատակ արտաքսվում է Ռուսաստանից։ Նրան հաջողվում է 1903 թվականին ընկնել Ժնև։ Այստեղ նա զբաղվում է գրաշարությամբ, թղթակցում է Ե. Պալյանի «Սոցիալիստական հանդեսին», ապա հիմնադրում տպագիր «Բանվոր» թերթը։ Արտասահմանում Գ. Կոզիկյանը (Եսալեմ) խզվում է ՌՍԴԲՊ-ից, մտնում է հայկական «սպեցիֆիկների» կազմակերպության մեջ։

Հոդվածի վերջում անհրաժեշտ ենք համարում տալ մի քանի տեղեկություններ Հայկ Փիլոսյանի հետագա գործունեության մասին։

Հայկ Փիլոսյանը մինչև 1902 թվականի դեկտեմբերը կալանավորված էր Թիֆլիսի Մետեխի բանտում։ Այնուհետև նա արտաքսվում է Պետերբուրգ[1]։ Պետերբուրգում Փիլոսյանը լրացուցիչ բանտարկության է ենթարկվում ուրիշի անձնագրով ապրելու համար և բերվում Թիֆլիս։ 1903 թվականի մայիսի վերջին, բանտարկության ժամկետը լրանալուց հետո, Հ. Փիլոսյանը ազատվում է բանտից։ Նրան կարգադրվում է անմիջապես մեկնել Բաթում և երեք ամսվա ընթացքում թողնել Ռուսաստանի սահմանները։

Թիֆլիսի բանվորները ջերմորեն ճանապարհ են գցում Հ. Փիլոսյանին դեպի Բաթում։ Այդ մասին Հ. Փիլոսյանը Գ. Կոզիկյանին ուղարկած նամակում գրում էր.

«Վերջացնելով իմ... պատիժս նահանգական բանտում (в губернской тюрьме) ինձ կրկին անգամ տարան ոստիկանապետի մոտ և այնտեղ վերջնականապես հայտնեցին, որ ինձ ազատ կթողնեն միայն մի օրով Թիֆլիսում, այն էլ խիստ հսկողության տակ՝ իմանալով իմ ճշգրիտ և մանրամասն հասցեն. տվի մի կեղծ հասցե, իսկ ես ճանապարհ ընկա Սանդրոյի տունը։ Անշուշտ կհիշես Սանդրոյին, որը մեզ հետ բանտարկվեց[2]։ Պետք է հիշել, որ երբ ինձ տանում էին ոստիկանատուն Սանդրոն հեռվից հետևում էր ինձ և երբ ոստիկանատնից դուրս եկա, անմիջապես համբուրվեցինք մեկ մեկու հետ։ Պետք էր մի հոգեբան, որ այդ ժամանակ կարողանար իմանալ ու թափանցել մեր հոգիները...։ Մի կողմից վախը, թե մի գուցե նկատեն մեզ, մյուս կողմից անսպասելի կերպով միմյանց պատահելը՝ աննկարագրելի է։ Վերջապես, այդ օրը ազատ շունչ քաշեցի, թեև միապետական ռեժիմի տակ ազատ շունչ քաշել անկարելի է մեզ պես մարդկանց համար, բայց երեկոյան արդեն ոստիկանությունն իմացել էր, որ ես սուտ հասցե եմ տվել, իսկույն ինձ առաջարկվեցավ երեկոյան գնացքով հեռանալ Թիֆլիսից Բաթում. ինձ ճանապարհ գցելու եկավ կայարան պրիստավի օգնականը, իսկ Էնֆիանջյանցի ծխախոտի գործարանի բանվորներից մոտ 15 հոգի մինչև Մցխեթ կայարանը եկան ճանապարհ դնելու՝ երգելով ու ուրախ-ուրախ խոսելով... Մեր ընկերներից շատերին պատահեցի, բայց որովհետև լրտեսները վխտում էին, այդ պատճառով գերադաս համարում էինք զգուշությունը»[3]։

---

[1] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 33, գ. 413, թ. 114։

[2] Սանդրո Բաջիաշվիլի։

[3] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 10, գ. 11, թ. 12։

Բաթումում Հ. Փիլոսյանը ոստիկանական բացարձակ հսկողության տակ մնում է մինչև հոկտեմբեր ամիսը։ Այդ ընթացքում նա աշխատում է Մանթաշյանի երկրորդ գործարանում։ Չնայած ոստիկանական հսկողությանը՝ այստեղ ևս Փիլոսյանը ռևոլյուցիոն աշխատանք է տանում բանվորների մեջ։ Բաթումի առաջավոր բանվորներից շատերը նախապես գիտեին Փիլոսյանին։ «Ինձ ամենքը ճանաչում էին»,— գրում է ինքը՝ Փիլոսյանը[1]։ Բաթումից Փիլոսյանը «Հ. Ադամյան» ստորագրությամբ ուղարկում է մի շարք թղթակցություններ ինչպես Կովկասում լույս տեսնող թերթերին, այնպես էլ Ժնևի սոցիալիստական մամուլին։ «Բանվոր» թերթի համար ուղարկած իր թղթակցություններում («Կովկասյան լուրեր» վերնագրով) Հ. Փիլոսյանը մանրամասն տեղեկություններ է տալիս Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական լենինյան իսկրայական կազմակերպությունների գործունեության, բանվորական և գյուղացիական շարժումների, սոցիալ-դեմոկրատական մամուլի և հասարակական քաղաքական այլ հարցերի մասին։

Թղթակցություններից մեկում Հ. Փիլոսյանը պատմում է, թե ինչպես ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի հանձնարարությամբ Բաթում է գալիս Գեորգի Թելիան՝ իր հետ բերելով տպագրական մեքենա, հայերեն և ռուսերեն տառեր՝ տպարան ստեղծելու համար, բայց ոստիկանության կողմից նկատվում ու ձերբակալվում է։

Փիլոսյանը տալիս է բանվոր-ռևոլյուցիոներ Թելիայի հերոսական նկարագիրը, որին չեն ընկճում բանտի խոշտանգումները։

«Թելիան,— գրում է Փիլոսյանը,— բոլոր գործի ծանրությունն իր վրա է վերցրել... Նա իրան շատ լավ է պահում հարցաքննության ժամանակ, որ պատիվ է բերում ամեն մի սոցիալիստի»[2]։

Նույն թղթակցության մեջ Հ. Փիլոսյանը մանրամասն հաղորդում է Լ. Կեցխովելու գնդակահարության մասին Մետեխի բանտում։ Մարտական ընկերոջ ծանր կորուստի առթիվ մեծ զգացմունքով Փիլոսյանը գրում է.

«Մեռավ Կեցխովելին, մեռավ սոցիալիստական գաղափարի ցանողներից մեկը։ Հանգիստ ոսկորներիդ քաջ զինվոր։ Նա մեկն էր վրաց սոցիալիստների մեջ, որը սկիզբ դրավ այդ գաղափարին, մեկն էր այն զինվորներից, որ անվախ ու համարձակ դուրս եկավ բռնության դեմ՝ պաշտպանելու աշխատավոր, իրավազուրկ ու շահագործված ժողովուրդներին։ Այո՛, և մենք պետք է վրեժ լուծենք մեր ընկերների անմեղ արյան համար։ Այդ էր սպասում Կեցխովելին, երբ վճիռը գալու վրա էր։ Ցավալի վճիռ, խավար վճիռ... Մեր բոլորիս սրտերն այսօր վշտացած է քո մահով, թանկագին Կեցխովելի։ Կեցխովելին այլևս չկա... Թող նրա արյունը դեպի վրեժ, դեպի կռիվ կանչե ամենքին, թող բորբոքվի մեր գործելու կայծը ընդդեմ բռնակալության»[3]։

1903 թվականի նոյեմբերին գրած մի այլ թղթակցության մեջ Հ. Փիլոսյանը ծավալուն տեղեկություններ է տալիս ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական Կոմիտեի կազմակերպական, պրոպագանդիստական-հրատարակչական բեղմնավոր գործունեության մասին, Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի բանվորների վիթխարի ցույցերի և գործադուլների մասին։ Խոսելով ցարական կառավարության

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 10, ղ. 11, թ. 12։

[2] Նույն տեղում, ֆ. 41, ղ. 7. թ. 12—13։

[3] Նույն տեղում։

կողմից հայկական եկեղեցական կալվածքների գրավման առթիվ ՌՍԴԲՊ Կովկասյան Միության հրատարակած կոչերի մասին, Փիլոսյանը գրում էր.

«Այդ կոչերին ու հրավերներին ամեն քաղաքներում միացավ ինտելիգենտ բանվորը, որովհետև քիչ ու շատ զարգացած, հասկացող բանվորը, աշխատավորը սոցիալիստ չլինել չէ կարող և նա լինում է, այդպես է եղել ուրիշ երկրներում, այդպես է և մեզանում, դրա դեմ արհեստական պատեր կանգնեցնելը ոչ մի արդյունք չի տալ, ինչպես որ մեր պարոն «դաշնակցականներն ու հնչակյաններն» են անում»[1]։

Հետաքրքիր է Փիլոսյանի վերաբերմունքը դեպի Գ. Կոզիկյանը, երբ վերջինս դարձավ «սպեցիֆիկ» և սկսեց գովել հրեական Բունդի կազմակերպական սկզբունքները։ Կոզիկյանի այդ վարքագիծը Փիլոսյանը վճռականորեն դատապարտում է։ Նա պաշտպանում է սոցիալ-դեմոկրատական պարտիայի կազմակերպական ցենտրալիզմի սկզբունքը, ընդդեմ Բունդի ֆեդերալիզմի։ Արդեն ԱՄՆ-ից 1904 թվականին Գ. Կոզիկյանին գրած իր նամակներից մեկում, վրդովված, որ վերջինս համակրում է Բունդին, Փիլոսյանը հրեական այդ պարտիան անվանում է մանրբուրժուական և միանգամայն անընդունելի պրոլետարիատի համար։

«Երբ ինձ Պետերբուրգ աքսորեցին,— գրում է Փիլոսյանը,— ճանապարհին բավական շփում ունեցա գնալուս և գալուս՝ բունդիստ-սոցիալիստների հետ և մեր գաղափարը՝ Ամերիկա գալով ավելի ևս հաստատվեց ու ամրապնդվեց նրանց մասին։ Սոցիալիզմը ազգայնական խտրություն չի դնում պրոլետարիատի շարքերում. նրա նպատակից դուրս է ազգայնական, լեզվական խտրությունները և բոլորի շահերը միատեսակ լինելով միասին էլ պետք է գործեն, տալով իհարկե ամեն մի ազգին պատկանող պրոլետարիատին որոշելու իր գործերը ինքը՝ սակայն միացյալ ընդհանուր կազմակերպության մեջ»[2]։

Բերելով Բաքվում կազմակերպված սոց. դեմ. Հայ կազմակերպության («սպեցիֆիկների») օրինակը և ցույց տալով, որ «այդ կազմակերպությունը գոյացավ ազգասերներից, դաշնակցականներից և այլն, եկեղեցական հարցից հետո», Փիլոսյանը վճռականորեն հայտարարում է. «Ոչ, սիրելիս, ոչ, ես միմիայն զուտ պրոլետարական հայացքի վրա եմ հիմնվում այս կետերը առաջ բերելով և համաձայն եմ... թե կենտրոնացումն անհրաժեշտ է»[3]։

1903 թվականի հոկտեմբերին ցարական իշխանությունները Հ. Փիլոսյանին վտարում են Ռուսաստանի սահմաններից։ Նա ցավով է թողնում Անդրկովկասը, սրտում փայփայելով այն հույսը, որ արտասահմանում կհաջողվի, ինչպես ինքն է ասում, «կանոնավոր անձնագիր» ձեռք բերել, նորից վերադառնալ Ռուսաստան և կռվել տապալելու համար ցարական «այդ հոտած ու նեխված ռեժիմը»[4]։

Ճանապարհ գցելիս Բաթումի հայ և վրացի բանվորներն իրենց միջոցներով հայթայթում են Փիլոսյանի համար զգեստ և ճանապարհածախս։

1903 թվականի նոյեմբերի 1-ին նա հասնում է Մարսել։ Երկար ժամանակ այստեղ աշխատանք և ապրուստի ոչ մի միջոց չգտնելով նա հարկադրված է

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 41, գ. 7, թ. 14—17։

[2] Նույն տեղում, գ. 2, թ. 121—122։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում, թ. 129։

լինում մեկնել Ամերիկա։ 1904 թվականի հունվարից նա հաստատվում է ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում։

Բոստոնում երկար ժամանակ նա աշխատանք չի գտնում։ Իմանալով նրա սոցիալ-դեմոկրատ լինելը, տեղի հայ դաշնակցականները ամեն ինչ անում են, որ նրան ոչ մի գործարանատեր աշխատանքի չընդունի։ «Այստեղի հայերն էլ, — գրում էր դառնությամբ Փիլոսյանը իր մի նամակում,— չափազանց այլ աչքով են նայում այն մարդու վրա, որն իր կուսակիցը չէ... Իսկ ես իմ հայացքներիս երբեք դավաճանած չեմ և չպիտի դավաճանեմ, թեկուզ մեռնելու լինեմ սովից ու քաղցից»[1]։

Երկար թափառումներից հետո, երբ «բախտը ժպտում է» նրան մի գործարանում աշխատանքի ընդունվելու, դաշնակցականները մատնում են և գործարանից իսկույն հանել տալիս։ «Կառավարչին ասել էին,— գրում է Փիլոսյանը,— թե այդ, այսինքն ես, կազմակերպել եմ ուզում և այլն... Մախլաս...»[2]։

ԱՄՆ-ում ևս Հ. Փիլոսյանը չի դադարեցնում իր ակտիվ, ռևոլյուցիոն գործունեությունը։ Նա եռանդուն մասնակցություն է ցուցաբերում բանվորական շարժմանը։ Ինչպես ուղարկած իր նամակներում նա շարունակ պահանջում էր ռուսական սոցիալ-դեմոկրատական գրքեր, թերթեր, ժուռնալներ՝ ռուսական կյանքի հետ կապը չիրելու համար։

Հ. Փիլոսյանը ԱՄՆ-ում խոշոր պայքար է ծավալում հայկական բուրժուական և մանրբուրժուական նացիոնալիստական պարտիաների դեմ, հայ բանվորների մեջ պրոպագանդելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի և դասակարգային անհաշտ պայքարի գաղափարները։

«... Այստեղ ես արդեն,— գրում էր Փիլոսյանը 1904 թ. օգոստոսին,— իմ ձեռնոցը նետել եմ բոլոր հայ բուրժուական կուսակցություններին — դաշնակ, հին ու նոր հնչակյանության երեսին»[3]։

Ռուսական ռևոլյուցիոն պրոլետարիատի, մեծ Լենինի կերտած մարքսիստական պարտիայի պայքարի բովում իր առաջին մարտական մկրտությունն ստացած Հ. Փիլոսյանը (Հ. Ադամյանը) ԱՄՆ-ի բանվորական շարժման մեջ ևս մինչև իր կյանքի վերջը կանգնած մնաց ռևոլյուցիոն մարքսիզմի դիրքերում[4]։

1898 թվականին ստեղծելով իրենց մարքսիստական խումբը հայ բանվորները բռնեցին ռևոլյուցիոն գիտակից պայքարի ուղին։ Նրանք տվեցին բանվոր ռևոլյուցիոներների, սոցիալիզմի անձնուրաց մարտիկների փայլուն ներկայացուցիչներ, որոնք ցարիզմի դաժան ռեժիմի պայմաններում՝ իրենց պրոպագանդայով, իրենց կազմակերպական աշխատանքով մարքսիզմի լույսի առաջին ճառագայթներն էին տարածում կարիքի ու մթի մեջ խարխափող աշխատավորական մասսաների մեջ։ Սոցիալիզմի համար պայքարի նրանց բարձրացրած դրոշը բռնեցին և առաջ տարան ռևոլյուցիոներների նորանոր ջոկատներ։ Հայ առաջավոր բանվորներն իրենց վրացի և ադրբեջանցի եղբայրների, ռուս մեծ պրոլետարիատի հետ մի համերաշխ ընտանիքում, մի միասնական ինտերնացիոնալ համառուսաստանյան բոլշևիկյան պարտիայի մեջ, խիզախորեն պայքարեցին դեմոկրատիայի և սոցիալիզմի հաղթանակի համար։

---

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստ. հայկ. ֆիլիալի արխիվ, ֆ. 41, գ. 2 թ. 127—128։

[2] Նույն տեղում, թ. 122։

[3] Նույն տեղում։

[4] Հ. Փիլոսյանը (Հ. Ադամյան) վախճանվել է 1918 թ. ապրիլի 16-ին։